Գ. Բ. ՂԱՐԻԲՋԱՆՅԱՆ, Հայ ժողովրդի ազատագրական պայքարը 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին, *Երևանի պետական համալսարանի հրատարակչություն, 1986, 161 էջ։*

ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Գ. Բ. Ղարիբջանյանի աշխատությունը նվիրված է հայ ժողովրդի պատմության ամենարարդ ու դժվարին ժամանակաշրջաններից մեկին։ Ճիշտ է հայ ժողովրդի պատմության այդ ժամանակահատվածում տեղի ունեցած իրադարձությունների մասին շատ է գրվել, սակայն դեռես անելիքներ կան։

Հեղինակի համար ելակետ են հանդիսացել մարքսիզմ-լենինիզմի դասականների համապատասխան մտքերն ու դրույթները սոցիալական և ազգային ճնշման պայմաններում գտնվող ժողովուրդների, այդ թվում հայ ժողովրդի ազատագրման վերաբերյալ։ Իրավացիորեն ցույց տալով, որ Օսմանյան կայսրությունը դաժան բանտ էր հայերի, հույների, բուլղարների, մակեդոնացիների, սերբերի, արաբների և ուրիշ ժողովուրդների համար, Գ. Ղարիբջանյանը մատնանշում է Ֆ. Էնգելսի այն միտքը, որ Ռուսաստանը առաջադիմական դեր էր կատարում Թուրքական բռնակալությունից և ազգային ճնշման շղթաներից այդ ժողովուրդների ազատագրման գործում։

Նշելով հայկական հարցի էվոլյուցիան, սկսած Սան-Ստեֆանոյի նախնական համաձայնագրից ու Բեռլինի կոնգրեսից մինչև 1890-ական թվականների հայերի մասսայական կոտորածները, հեղինակը մերկացնում է եվրոպական պետությունների երկերեսանիությունը, նրանց մեղսակցությունն արևմտահայության ողբերգությանը։ Այո, եվրոպական պետությունների թույլտվությամբ ու հովանավորությամբ սուլթանական Թուրքիայի կառավարողներն անցյալ դարի 90-ական թվականներին կազմակերպեցին և իրականացրեցին մոտ 300 հազար հայերի բնաջնջումը։ Այդ տարիներին հրի ու սրի մատնվեցին հարյուրավոր հայկական գյուղեր ու քաղաքներ, ավերվեցին մեծ քանակությամբ դպրոցներ, վանքեր ու եկեղեցիներ։

Գրքում պատկերված են XIX դ. 90-ական թվականների արևմտահայության ազատագրական պայքարի փայլուն էջերը։ Կարևոր տեղ է հատկացված հայդուկային շարժման խնդիրներին և առանձնապես նրա գլխավոր կենտրոններին՝ Զեյթունին, Սասունին ու Վասպուրականին։ Ցտանելով Թուրքական աստիճանավորների, քրդական բեկերի հարոտահարություններն ու բռնաբարությունները, հայդուկները բարձրանում էին լեռները և կռվում կառավարական զորքերի դեմ։ Հայդուկային շարժման հեղինակավոր ղեկավարներ էին Սերոբ Վարդանյանը, Անդրանիկ Օղասյանը, Ռուբեն Շիշմանյանը, Գևորգ Չավուշը, Փանոս Թերլեմեզյանը և շատ ուրիշներ։

Գրքում ցույց է տրված, որ հայ ժողովրդի ազատագրական պայքարը շերմ պաշտպանության էր արժանանում Ռուսաստանի, եվրոպական շատ երկրների և Ամերիկայի առաջադեմ հասարակայնության կողմից։ Սուլթանական Թուրքիայի հայաջինջ քաղաքականությունը, 1890-ական թվականների հայկական կոտորածները, որոնք ցնցեցին ամբողջ աշխարհը, վճռականորեն դատապարտվեցին Ռ. Լյուքսեմբուրգի և Ցո. Լեփսիուսի, Ցու. Վեսելովսկու և Մ. Կովալևսկու, Ժ. Ժորեսի և Ա. Ֆրանսի, Դ. Բլագոևի և բազմաթիվ նշանավոր հասարակական այլ գործիչների կողմից։

Աշխատության մեջ հեղինակը նշում է հայ ժողովրդի ազգային-ազատագրական և հեղափոխական պայքարի անխզելի, օրգանական կապը։ Դա կոնկրետ կերպով դրսևորվում է դրքի այն բաժնում, որը նվիրված է Ռուսաստանի 1905—1907 թվականների հեղափոխությանը և հայ ազատագրական պայքարին։ Ռուսաստանյան առաջին հեղափոխությունը մեծ ազդեցություն ունեցավ նաև հայ ժողովրդի ազատագրական պայքարի վրա, նոր մղում տվեց հայ հասարակական մտքի զարգացմանը։ «Հեղափոխության բոլոր փուլերում,— նշում է Գ. Ղարիբջանյանը,— հայ ժողովրդի ազատագրական պայքարն ընթանում էր համառուսաստանյան ընդհանուր շարժմանը համընթաց, պրոլետարական ինտերնացիոնալիզմի դրոշով» (էջ 33)։ Անչափ տեղին է Ստ. Շահումյանի առաջադրած դրույթներից այն մեջբերումը, որ «ցարական լծի տակ հեծող բոլոր ազգությունների պրոլետարների համերաշխությունը հեղափոխության հաղթության գլխավոր գրավականն է»։ Գրքում փաստեր են բերվում այն մասին, որ ռուս պրոլետարիատի հետ իրենց դասակարգային համերաշխությունն էին հայտնում և հեղափոխական պայքարի մեջ ներգրավվում Անդրկովկասի հայ, վրացի, ադրբեջանցի և ուրիշ-

աղբերի բանվորներն ու գյուղացիները։ Հեղափոխությունը լուրջ քննություն էր հայ ժողովրդի աղատագրության հարցով զբաղվող բոլոր կուսակցությունների համար։ Այդ քննությունը լավ բռնեցին հայ բոլշևիկները՝ ճիշտ զուգորդելով իրենց ժողովրդի պայքարը հանուն սոցիալական ու ազգային շահերի։ Միանգամայն ճիշտ է հեղինակի կողմից այն հայտնի դրույթի նշումը, որ ինչպես բոլոր ճնշված ժողովուրդների, այնպես էլ հայ ժողովրդի ազգային ու սոցիալական ազատագրությունը հնարավոր էր միայն Ռուսաստանում սոցիալիստական հեղափոխության հաղթանակի շնորհիվ։

Գրախոսվող աշխատության մեջ տեղ է հատկացված առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին և նրա ժամանակաշրջանում հայ ժողովրդի սոցիալական և ազգային-ազատագրական պայքարին։

Աշխատության հեղինակը ձգտել է հայ ժողովրդի սոցիալական և ազգային-ազատագրական շարժումները լուսաբանել ամբողջական ձևով, Հայաստանի ինչպես արևելյան, այնպես էլ արևմտյան հատվածներում։ «Արևելյան Հայաստանում,— գրում է հեղինակը,— որն իր բախտն ընդմիշտ կապել էր Ռուսաստանի հետ, ազգային-ազատագրական շարժումները սերտաճում էին ռուսական պրոլետարիատի հեղափոխական պայքարին... Ինչպես ցարական Ռուսաստանի մյուս ճնշված ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումները, այնպես էլ հայկականը, զարգանալով դառնում էին ընդհանուր հեղափոխական պայքարի անբաժան մասը, սոցիալիստական հեղափոխության ռեզերվը» (էջ 51)։ Ի տարբերություն Արևելյան Հայաստանի, Արևմտյան Հայաստանում շարունակվում էին երեք միլիոնից ավելի հայերի հալածանքներն ու կոտորածները, ոչ մի օրենքով չէր ապահովվում նրանց կյանքն ու գույքը։ Սկսած 1908 թվականից, երբ իշխանության գլուխ անցավ «Միություն և առաջադիմություն» կուսակցությունը, Թուրքիայում իրականացվում էր երիտթուրքերի ռազմատենչ ու հայատյաց քաղաքականությունը, որը հովանավորվում էր եվրոպական պետությունների կողմից։ Երիտթուրքերի հայաջինջ քաղաքականությունը լիովին դրսևորվեց 1909 թ. գարնանը Ադանայում, Տարոնում, Մարաշում, Հալեպում և այլուր տեղի ունեցած հայկական կոտորածների ժամանակ։ Այդուհանդերձ, 1909 թ. օգոստոսին դաշնակցության պարագլուխները, երիտթուրքերի կոմիտեի հետ ստորագրեցին միխայտառակ համաձայնագիր, որով Արևմտյան Հայաստանը հռչակվում էր Օսմանյան կայսրության անբաժան մասը։

Հեղինակը աշխատել է պատկերել ոչ միայն արևմտահայության գենոցիդը, այլև տալ հայերի հերոսամարտերի պայծառ էջերը Վանում, Շատախում, Մուշում, Սասունում, Շապին-գարահիսարում, Սուեդիայում (Մուսալեռ), Ուրֆայում և այլուր։ Հետաքրքրությամբ են ընթերցվում մուսալեռցիների, զորավար Անդրանիկի, հայկական կամավորական շոկատների, իսկ հետագայում ռուսական զորքերի կազմում ստեղծված հայկական գումարտակների, փառաբանված զորավարներ Հայկ Բժշկյանի (Դայ), Հովհաննես Բաղրամյանի սխրագործությունները։

Աշխատության մեջ ընդգծված է այն իրողությունը, որ ինչպես մյուս ժողովուրդների, այնպես էլ հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի հարցերը միշտ էլ գտնվել են Վ. Ի. Լենինի, բոլշևիկների կուսակցության ուշադրության կենտրոնում։ Թուրքական կառավարողների հայասպան քաղաքականությունը վճռականորեն դատապարտել են Վ. Ի. Լենինի զինակիցներ Գ. Կ. Օրջոնիկիձեն, Ա. Պ. Ջափարիձեն, Ս. Մ. Կիրովը, Ս. Գ. Շահումյանը, Ս. Ս. Սպանդարյանը, Ա. Ֆ. Մյասնիկյանը և ուրիշներ։ Հայ ժողովրդի ազատագրական պայքարը ջերմորեն պաշտպանել են միջազգային կոմունիստական շարժման ականավոր գործիչներ Ռ. Լյուքսեմբուրգը, Կ. Լիբկնեխտը, Դ. Բլագոևը, Վ. Կոլարովը, Գ. Դիմիտրովը, Մ. Կաշևը և շատ ուրիշներ։ Հեղինակը օգտագործել է Յո. Լեփսիուսի, Ա. Վեգների, Ֆ. Նանսենի, Ա. Բարբիի, Հ. Բարբյուսի, Ա. Ֆրանսի, Հ. Գիբոնսի, Ջ. Բրայսի, Ա. Թոյնբիի, Հ. Մորգենթաուի և շատ ուրիշների հրապարակված արժեքավոր փաստաթղթերն ու նյութերը, որոնք մեծ չափով նպաստում են ազատագրական շարժումներին և հայերի գենոցիդին վերաբերող հարցերի լուսաբանմանը։

Գրքում զգալի տեղ է հատկացված հայ ժողովրդի նոր դարագլխին, որը սկսվեց Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակով և Հայաստանում սովետական իշխանության հաստատմամբ։ Գ. Ղարիբջանյանը անդրադարձել է «Ռուսաստանի ժողովուրդների իրավունքների դեկլարացիային», «Թուրքահայաստանի մասին դեկրետին», ինչպես նաև հայ ժողովրդի ազատագրական պայքարի այնպիսի փառապանծ էջերին, ինչպիսիք են Սարդարապատի, Ղարաքիլիսայի և Բաշ-Ապարանի հերոսամարտերը։

Գ. Ղարիբջանյանը անարգանքի սյունին է գամել դաշնակցականների դավաճանական ու հակաժողովրդական քաղաքականությունն ու գործերը։ 1918 թ. Բաքումում և այնուհետև 1920 թ.

Ալեքսանդրապոլում նրանց ստորագրած խայտառակ պայմանագրերը դրանց պարզ ապացույցներն են։

Գրքում պատկերված են հայ աշխատավոր ժողովրդի հեղափոխական պայքարի պայծառ էջերը՝ Ալեքսանդրապոլի մայիսյան ապստամբությունից մինչև Հայաստանում սովետական իշխանության հաստատումը։

Գ. Ղարիբյանյանի աշխատությունն ավարտվում է այն պարզ ու հստակ հետևությամբ, որ սովետական իշխանության շնորհիվ իրականացավ հայ ժողովրդի դարավոր երազանքը՝ ունենալու ազատ ու հզոր հայրենիք։

ՍՏԵՓԱՆ ՍՏԵՓԱՆՅԱՆ
Պատմական գիտությունների դոկտոր

ՌԱՖՖԻ ԿՈՆԴԱԿՉՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու